**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«26» հոկտեմբերի 2020թ. N 82-Հ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԴՈՆՑԻ ՓՈՂՈՑԻ N 19/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՐՎԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՆԿ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԲԱՆԱԼԻ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 885-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

**1.** Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 20-ի N 80-Ա հրամանով հաստատված հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու հավակնորդ ծառայողների (այսուհետ՝ Ծառայողներ) կողմից անձնական էջն ակտիվացնելու նպատակով Կոմիտեի գանձապետական ավանդային հաշվին 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի նոյեմբերի 13-ը՝ ժամը 17:59:

**2.** Ծառայողների կողմից բնակարանների ընտրության վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի նոյեմբերի 20-ը՝ ժամը 17:59:

**3.** Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

10/26/2020

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050 Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ